



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Հունիս-օգոստոս 2018, թիվ 7-8 (119-120)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**Ուսումնասիրման ենթակա կարելոր
հարցերը՝ հետագա վերլուծության հիմք**

«Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» (2017-2018) ծրագիրն (Ծրագիր) իրականացվում է Եվրոպայի Խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագրի համատեքստում՝ Եվրոպայի կառավարության աջակցությամբ: Ծրագրի նպատակն է ամրապնդել տեղական ժողովրդավարությունը Հայաստանում և նպաստել ապակենտրոնացման խորացմանը:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչից՝ օրենսդրական աջակցություն ու փորձագիտական խորհրդատվություն և կարողությունների զարգացում: Առաջին բաղադրիչի շրջանակներում Ծրագիրը փորձագիտական աջակցություն է տրամադրում կառավարությանը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, բարելավելու տեղական ինքնակառավարման իրավական և ինստիտուցիոնալ հիմքը՝ եվրոպական չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան:

Ծրագրի երկրորդ բաղադրիչն ուղղված է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համայնքային աշխատակիցների կարողությունների զարգացմանը՝ Տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտության կենտրոնի գործիքների օգնությամբ: Համայնքներին ընձեռվում են կարողությունների զարգացման հնարավորություններ՝ ուղղված քաղաքացիական մասնակցության խրախուսմանը տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում, ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը, համայնքային ռազմավարական պլանավորմանը:

Ծրագրի բաղադրիչներից առաջինի շրջանակներում փորձագիտական աջակցություն է տրամադրվում ՀՀ կառավարությանը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության՝ բարելավելու տեղական ինքնակառավարման իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը:

Այս համատեքստում մի քանի հանդիպումներ տեղի ունեցան ՀՀ իշխանությունների ներկայացուցիչների և տեղական փորձագետների հետ:

Այդ հանդիպումները հանգեցրին այն եզրակացության, որ գործող օրենքով նախատեսված համահարթեցման համակարգի ընդհանուր սկզբունքները տեխնիկապես հուսալի են, քանի որ հիմնված են ֆինանսական բացի համահարթեցման վրա և հաշվի են առնում ինչպես համայնքների ֆինանսական կարողությունները, այնպես էլ՝ ստանդարտ ծախսային կարիքները:

Այդուհանդերձ, առկա են մի քանի կարելոր հարցեր, որոնք պետք է ուսումնասիրվեն և ներկա համակարգի բարելավման ու համախմբման հնարավորությունների հետագա վերլուծության հիմք դառնան:

Տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարելավման գծով հնարավորությունների նախնական վերլուծության արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1) բարձրացնել համայնքների ֆինանսական անկախությունը նոր տեղական հարկերի համակարգի ներդրման միջոցով,

2) բարելավել ֆինանսական համահարթեցման համակարգը՝ հաշվի առնելով համակարգում առկա որոշ խնդիրները և համակարգը ավելի թափանցիկ դարձնել, հրապարակելով կիրառվող չափորոշիչները և մեթոդաբանությունները,

3) բարելավել ծախսային կարիքները որոշելու վիճակագրական մեթոդը՝ համայնքների իրավասությունների առավել ճշգրիտ սահմանման միջոցով:

ՄԻ ՕՐ ԿՈՒՆԵՆԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐՏԵՂ ՏԻՄ-Ն ԻՐ ՈՒՐՈՒՅՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ԿՈՒՆԵՆԱ

Համայնքների միավորման գործընթացը շարունակական է լինելու



«Համայնք-ՀամաՏեղի» գրուցակիցն է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը:

- Պարոն Պապիկյան, «Համայնք-ՀամաՏեղ» պաշտոնաթերթը ստանում են ՀՀ բոլոր համայնքները, բնակավայրերը: Ի՞նչ կուզենայիք փոխանցել մեր ընթերցողներին:

- Սիրելի բնակիչներ, ուզում եմ տեղեկացնել ձեզ, որ յուրաքանչյուր շաբաթ եւ կիրակի այցելում եմ ՀՀ տարբեր մարզեր: Մեզ կարող եք սպասել ձեր համայնքում, շնորհակալ ենք հարցերի ու հետեւողականության համար: Կհանդիպեմք շուտով...

էջ 2 →

ԲԱԶՄԱԲՆԱԿԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒՇԱՆՈՒՄ Է

Արդեն երեք տասնամյակ է, ինչ Հայաստան մուտք գործեց Եվրոպայի զարգացման և համագործակցության գործակալությունը (ԵՀԶԳ), որը համագործակցելով ՀՀ կառավարության հետ, իրականացնում է բազմաթիվ ծրագրեր: Կատարված աշխատանքների, առաջիկա անելիքների և մի քանի այլ հարցերի շուրջ «Համայնք-ՀամաՏեղը» գրուցեց ԵՀԶԳ գրասենյակի ծրագրերի համակարգող Սերգեյ Գովհաննիսյանի հետ:

- Պարոն Գովհաննիսյան, Եվրոպայի զարգացման և համագործակցության գործակալությունը Հայաստանում ակտիվ գործունեություն ծավալող միջազգային կառույցներից մեկն է: Ոլորտային ի՞նչ ուղղություններով եք աշխատում:

- Եվրոպայի զարգացման և համագործակցության գործակալությունը Հայաստանում իր գործունեությունը սկսել է 1988թ., երբ աղետալի երկրաշարժից հետո շվեյցարական փրկարարական ջրկատները ժամանեցին Հայաստան՝ կատարելով համապատասխան աշխատանքներ: Հետագայում Սպիտակ համայնքում կառուցվեց նաև շվեյցարական թաղամաս:

ԵՀԶԳ գործունեության հաջորդ ակտիվ փուլը սկսվեց 2002թ., երբ Հայաստանում հիմնվեց գրասենյակ, և որդեգրվեց ռազմավարական երկու ուղղություն՝ հումանիտար և զարգացման ծրագրեր: 2004թ. ապրիլին երեւանում ՀՀ և Եվրոպայի Համադաշնության կառավարության միջեւ ստորագրվեց «Տեխնիկական, ֆինանսական և հումանիտար համագործակցության մասին» համաձայնագիրը, որը սահմանեց օժանդակության կանոնները:

Հումանիտար ծրագրերի շրջանակում մենք աջակցեցինք ՀՀ կառավարությանը, և ներդրվեց «Սոցիալական տուն» աջակից պայմաններով» գաղափարը: Որպես մոդել Գորիսում և Երեւանում կառուցվեցին սոցիալական տներ, որոնք ժամանակավոր տրամադրվում էին անտուն, կարիքավոր ընտանիքներին, իսկ համայնքը պատասխանատվություն էր կրում շենքերի պահպանման համար: Այս գաղափարին հաջորդեց ՀՀ կառավարության կողմից սոցիալական տան կոնցեպտի մշակումը:

էջ 4 →

էջ 8 →

← էջ 1

ՄԻ ՕՐ ԿՈՒՆԵՆԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐՏԵՂ ՏԻՄ-Ն ԻՐ ՈՒՐՈՒՅՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ԿՈՒՆԵՆԱ

Համայնքների միավորման գործընթացը շարունակական է լինելու



Տարածքային կառավարումը եւ տարածքային կառավարման այն մոդելը, որն այսօր առկա է Հայաստանում, բարեփոխման կարիք ունի, իսկ բարեփոխման այդ գործընթացն իրականացնելու համար պետք է ունենալ ռեալ ու ճշգրիտ պատկեր: Այս նպատակով հանգստյան օրերս նվիրում եմ համայնքային այցելություններին:

Այցերի մասին նախապես մամուլի հաղորդագրություն է տարածվում Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) կայքով եւ ֆեյսբուքյան էջով, ինչպես նաեւ հայտարարություն է տեղադրվում իմ ֆեյսբուքյան էջում, որպեսզի մարդիկ տեղեկանան, թե երբ ենք լինելու իրենց համայնքում եւ կարողանան համայնքային խնդիրներին վերաբերող իրենց դիմում-բողոքներն ուղարկել ինձ:

Ճանաչողական այցերի ընթացքում խորհրդակցություններ եմ անցկացնում մարզպետերի, համայնքների ղեկավարների, ավագանու հետ, նրանց առջեւ բարձրացնում եմ համայնքի բնակիչների ներկայացրած խնդիրները, քննարկում նախապես հավաքագրված հարցերը, ու միասին փորձում ենք հասկանալ դրանց լուծման ճանապարհները: Հնարավորության դեպքում տեղում հանդիպումներ եմ ունենում հենց բնակիչների հետ եւ լսում նրանց մտահոգությունները:

Իհարկե, դժվար է տարվա կեսին, երբ համայնքային բյուջեները վաղուց հաստատված են, խնդիրներին լիարժեք լուծումներ տալ, բայց փորձում ենք քայլեր ձեռնարկել՝ օգտագործելով նաեւ կառավարության կողմից հավելյալ սուբվենցիաների տրամադրման հնարավորությունը:

-Ձեր գործունեության ընթացքում ինչպիսի՞ խնդիրների, բացթողումների եք հանդիպում, որոնք խոչընդոտում են տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման կայացմանն ու զարգացմանը:

Երկրի համաչափ զարգացումը մեզ համար շատ կարեւոր, կենսական նշանակություն ունի, որովհետեւ ունենք կենտրոն՝ խոշոր Երեւան եւ ունենք մարզային բնակավայրեր, որոնք շատ դեպքերում արդեն կանգնած են լքման կամ դատարկման եզրին: Սա, կարծում եմ, ազգային անվտանգության խնդիր է, եւ մեզ պետք են ուժեղ համայնքներ: Իսկ ուժեղ համայնքներ ունենալու համար միայն հայտարարություններն ու բառերը լուծում չեն:

Պետք են գործողություններ, որոնք ես տեսնում եմ հետեւյալ կերպ՝ նախ պետք է ֆինանսական միջոցներից հնարավորինս մեծ բաժին հատկացնել համայնքներին, եւ մեզ համար պետք է առաջնային դառնա տնտեսական ենթակառուցվածքների բարելավումը: Համայնքի զարգացումն անհնար է, եթե չկան համապատասխան պայմաններ: Մենք չենք կարող ներդրումներ անող գործարարներին ուղղորդել հեռավոր համայնքներ, եթե այնտեղ չկան ենթակառուցվածքներ, որոնք պետք է նպաստեն նրանց բիզնեսի զարգացմանը:

Որպեսզի կարողանանք զարգացնել համայնքները, նախ պետք է ակտիվացնել, թե ինչ խնդիրներ կան այդ համայնքներում: Այսօր հարցեր կան, որոնց պատասխանները գտնելու համար մեզ ընդհանուր պատկեր է պետք, որը չունենք, իսկ ինչ որ ունենք՝ արտուրդի ժանրից է. տարբեր աղբյուրներից ստացվող տվյալներն իրար հակասում են, իսկ համայնքապետերի տրամադրած ինֆորմացիան էլ շատ հեռու է իրականությունից:

Այստեղից էլ առաջացել է գյուղական անձնագրերի գաղափարը: Գյուղական անձնագիրը մի փաստաթուղթ է, որտեղ նշվելու է համայնքի աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, համայնքի մասին ամեն ինչ՝ հողերի քանակը՝ մշակվող, անմշակ, անտառամերձ, քանի խոշոր ու մանր եղջերավոր կենդանի կա համայնքում, խորհրդային տարիներին ինչ մշակաբույսեր են աճեցվել, եւ ինչ կարող ենք առաջարկել գյուղացուն այսօր:

Այսինքն՝ գյուղական անձնագիրը համայնքի ընդհանուր պատկերն է, նկարագիրը, որի առկայությունը հնարավորություն է տալու գնահատել, համադրել, համեմատել ցուցանիշները ու հասկանալ, թե ինչ ուղղությամբ կարող է զարգանալ տվյալ համայնքը:

Դրա համար պետք է գնալ տեղում ծանոթանալ եւ վերլուծություններ հիման վրա կայացնել հաշվեկշիռված ու հիմնավոր որոշումներ:

-Պարոն նախարար, համայնքներում առկա խնդիրների լուծման հարցում կարեւորեցի՞ք հավելյալ սուբվենցիաների տրամադրումը:

Ես կարեւորում եմ ՀՀ կառավարության որոշումը, համաձայն որի համայնքներին կհատկացվի 278 մլն 999.5 հազար դրամ պետբյուջեով՝ արդեն իսկ նախատեսված սուբվենցիաներից բացի այլ սուբվենցիաներ տրամադրելու նպատակով:

Համայնքներին սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է համաֆինանսավորման տարբերակով. եթե ծրագիրը սոցիալական է, ապա 40 տոկոսը ֆինանսավորում է կառավարությունը, 60 տոկոսը՝ համայնքը, իսկ եթե ծրագիրը վերաբերում է տնտեսական ենթակառուցվածքներին, ապա հարաբերակցությունը փոխվում է:

Վերջերս տեղի ունեցավ սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի նիստը, որի ընթացքում քննարկվեց հանրապետության 37 համայնքներից ստացված սուբվենցիայի 42 ծրագրային հայտ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1,598 մլրդ դրամ: Նշված գումարից համայնքների կողմից ֆինանսավորումը կազմում է 980,3 մլն դրամ, պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափը՝ 642,8 մլն դրամ, իսկ 598,4 հազար դրամը մասնավոր հատվածի միջոցներն են:

Քննարկման արդյունքներով հանձնաժողովի կողմից հավանության արժանացավ 38 ծրագիր, որոնք իրենց մեջ ներառում են փողոցների ասֆալտապատում ու բարեկարգում, փողոցային լուսավորության եւ ֆոտովոլտային կայանների կառուցում, խմելու ջրի եւ ոռոգման համակարգերի կառուցում ու վերանորոգում, նաեւ համայնքապատկան շենք-շինությունների վերանորոգում, հանդիսությունների սրահների, համայնքային կենտրոնների կառուցում ու վերանորոգում:

Ցավոք, սուբվենցիաներից առայժմ չեն կարողանում օգտվել փոքր համայնքները, որոնց սուղ բյուջեն, որպես կանոն, բավարարում է միայն աշխատակազմ պահելու համար: Այս

հարցը մենք փորձելու ենք լուծել զուգահեռ այլ, հրատապ խնդիրների լուծման նպատակով համայնքներին նպատակային սուբվենցիաներ հատկացնելու միջոցով:

Սրան հակառակ, մենք բավական դրական արդյունքներ տեսանք խոշորացված Մեղրի, Գորիս, Սիսիան համայնքներում, որոնք օգտվել էին համաֆինանսավորվող սուբվենցիաների այս ծրագրից:

- Ինչպե՞ս եք տեսնում դեռեւս նախորդ իշխանությունների օրոք ՏԻ ոլորտում մեկնարկած մի շարք գործընթացների ապագան (վարչատարածքային բարեփոխումներ, բյուջետավարման եւ պլանավորման նոր մոդելներ):

Ինչոր կա սկսված փոփոխությունների իրականացման ձեւի հետ կապված: Եվ սա է պատճառը, որ փորձում եմ ավելի հանգամանալից ուսումնասիրել ոլորտը, հասկանալ, թե ինչ բացթողումներ են եղել վարչատարածքային բարեփոխումների ընթացքում, որպեսզի առաջիկայում, երբ գործընթացի նոր փուլ մուտք գործենք, այլեւս սխալներ թույլ չտանք կամ գոնե դրանք հասնեն մինիմումի:

Այսօր, երբ շրջում եմ համայնքներում, տեսնում եմ, որ կան բավական շատ ձեռքբերումներ, բայց կան նաեւ շեղումներ, որոնք ունեցել են օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ: Սուբյեկտիվ գործոնը հիմնականում պայմանավորված է կուսակցական ու քաղաքական շահով, ինչն այս բարեփոխման մեջ ոչ մի դերակատարում չպետք է ունենա:

Շատ դեպքերում հաշվի չի առնվել հանրային կարծիքը, որն ամենաեականն է:

Պետք է աշխատանք տանել մարդկանց հետ, լսել նրանց կարծիքները, ներկայացնել դրական փորձը, պետք է փոխել այն թուր կարծիքը, որ հա-

մայնքների միավորման արդյունքում դպրոցներ են փակվելու, համայնքներ են դատարկվելու...

Հայաստանում խոշորացման գործընթացը, որը ես կանվանեմ համայնքների միավորում, շարունակական է լինելու, բայց այն չի լինելու նախորդ փուլերի նման, որովհետեւ հաշվի է առնվելու կամավորության, համայնքների բնակիչների հավաքական կամքի ձեւավորման գործոնը:

-Ինչպես հայտնի է, նախարարությունը դուրս կազմակերպություններին ներկայացրել է ապակենտրոնացման ճանապարհային քարտեզը: Ի՞նչ ընթացքի մեջ է այդ գործընթացը, եւ ինչպե՞ս եք տեսնում դրա մոտակա շարունակականությունը:

Ապակենտրոնացման տեսլականը լավն է, եւ ես կհստի եմ այդ գաղափարը եւ կարծում եմ, որ մի օր Հայաստանում կստեղծենք կառավարման այնպիսի համակարգ, որտեղ ՏԻ-ը կունենա իր ուրույն դերակատարումը: Հիմա պետք է գործնականում ամեն ինչ անենք, որ տեղական ինքնակառավարման մարմինն իրավամբ դառնա այնպիսին, ինչպիսին ամրագրված է օրենքով: Այսինքն, ավագանու անդամների եւ համայնքի ղեկավարի հարաբերությունները պետք է լինեն ոչ թե ենթակայի ու ղեկավարի հարաբերություններ, այլ պետք է լինեն մեխանիզմներ, որոնք հակակշռում են մեկը մյուսին: Դրանից զատ, ՏԻ մարմնի ղեկավարը պետք է հասկանա, որ ինքը գործադիր իշխանության ուղիղ ենթակառուցված է: Օրենքով սահմանված կարգով նրանց հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են, եւ դրանից դուրս այն կապը, որ ունեցել են նախորդ փուլերում, այսօր չի լինելու: ՏԻ-ը լինելու է անկախ, որովհետեւ այն տեղական բնակչության կամքի արտահայտումն իրացնող մարմինն է, եւ գործադիր իշխանությունը չպետք է միջամտի ՏԻ Ներքին գործերին:

Մեր հիմնական նպատակն է հասնել ամբողջական ապակենտրոնացման, որը դեռեւս միտք է, եւ կարծում եմ, որ Հայաստանում տարածքային կառավարման եռաստիճան համակարգից պետք է անցնենք երկաստիճան կառավարման մոդելի, որն էլ կհանդիսանա ամբողջական ապակենտրոնացման հիմքը: Այսօր մարզերում տարածքային կառավարման մարմիններն ունեն շատ լիազորություններ, որոնք պետք է պատվիրակվեն համայնքներին: Եվ այս փուլային պատվիրակումն էլ կբերի իրական, հավասար ապակենտրոնացման:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ Է ՈՐՈՇԵԼՈՒ, ԹԵ ԻՆՉԸ ՓՈԽԵԼ, ԻՆՉԸ ՉՓՈԽԵԼ ԵՎ ԻՆՉ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՓՈԽԵԼ

Համամասնական ընտրակարգի ներդրումը որպես արդյունավետ կառավարման գրավական

Սույն թվականի օգոստոսի 1-ին ՀՀ վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովը եւ «Համայնքների ֆինանսիստների միավորում» (ՀՖՄ) ՀՀ-ն («Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում կազմակերպել էին հանրային քննարկում՝ ՏԻ մարմինների ձեւավորման վերաբերյալ արդեն իսկ ներկայացված առաջարկների մասին կարծիքներ ու տեսակետներ լսելու, ինչպես նաեւ նոր առաջարկներ հավաքագրելու նպատակով:

Ողջունելով ներկաներին՝ քննարկումը նախագահող ՀՖՄ ղեկավար Վահան Մովսիսյանը նշեց. «Դեռեւս 15 տարի առաջ, երբ մենք բարձրաձայնեցինք, որ համայնքի ավագանին պետք է քաղաքական պատասխանատվություն կրի, այդ մտքի հետ քչերն էին համակարծիք: Այդ գաղափարը սկսեց աստիճանաբար զարգանալ, եւ ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ այն անառարկելի ճշմարտություն է: Այսինքն՝ ավագանին պետք է լինի ընտրված համամասնական ընտրակարգով»: Բանախոսն ավելացրեց նաեւ, որ ավագանին չի կարող ամբողջությամբ կուսակցականացված լինել, եւ ավագանու կազմում ընդգրկվելու հնարավորություն պետք է տալ նաեւ քաղաքացիական նախաձեռնություններին:

Անդրադառնալով օրակարգային հարցերին՝ «Հայաստանի համայնքների միության» (ՀՀՄ) նախագահ Էմին Երիցյանը նշեց, որ միությունը կողմնակից է, որ համայնքի ղեկավարի ընտրությունները լինեն ուղիղ, եւ առաջարկեց ավագանու ընտրությունների դեպքում կիրառել եւ մեծամասնական, եւ համամասնական ընտրակարգերը, ինչպես նաեւ ավելացնել ավագանու անդամների թիվը:

ՀՀՄ ղեկավարը նաեւ համոզմունք հայտնեց, որ նպատակահարմար չէ Ազգային ժողովի ընտրական համակարգին զուգահեռ քննարկել նաեւ ՏԻՄ ընտրական համակարգը: «Այս փուլում հանձնաժողովին եւ կառաջարկեի, որ անդրադառնալիս ընտրական գործընթացում տեղական իշխանությունների լիազորություններին, որովհետեւ հակասություններ կան ՏԻՄ օրենքով սահմանված լիազորությունների մասով եւ «Ընտրական օրենսգրքում» սահմանված լիազորությունների մասով»:

Ի պատասխան հնչեցված մտահոգության՝ Գյումրու «Ապարեզ» լրագրողների ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը նկատեց, որ իմմս է պահը Ընտրական օրենսգրքին վերաբերող քննարկումներում ներառել նաեւ ՏԻՄ-երի ձեւավորման եւ կարգավորման մասին առաջարկությունները: Պետք է «երկաթը տաք-տաք ծեծել», քանզի կա տխուր փորձ, եւ այսօր քննարկվող առաջարկների մի մասը ներկայացված են եղել դեռեւս 2016 թվականի Ընտրական օրենսգրքի բարեփոխումների ժամանակ եւ անտեսվել են:

Օրակարգային առաջին կետի վերաբերյալ Լ. Բարսեղյանը



նը նշեց, որ երկարատե քննարկումներից հետո ձեւավորվել է տեսակետ, որ ճիշտ կլինի ընդարձակվի այն համայնքների ցանկը, որտեղ ավագանու ընտրություններ, ինչպես Երեւան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում, անցկացվեն համամասնական ընտրակարգով, ինչը կբերի ՏԻ համակարգում ավելի արդյունավետ կառավարման:

Նշյալ ընտրակարգին անցնելու համար Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) ծրագրերի ղեկավար Միքայել Հովհաննիսյանը շեշտադրեց այն հանգամանքը, որ մենք դեռեւս ապրում ենք ՀՀ-ի կողմից ձեւած-կարած համակարգի պայմաններում: «Պետք է հաշվի առնել քաղաքական համակարգի եւ կուսակցական համակարգի կայացվածության աստիճանը, եւ թե որքանով են հավասար տարբեր մարզերում կուսակցությունների մասնակցության հնարավորությունները: Սրանով պետք է պայմանավորված լինի, թե երբ պետք է ամբողջական անցում կատարել մեծամասնականից համամասնականի», - ասաց ԵՀՀ ծրագրերի ղեկավարը: Վերջինս ավելացրեց, որ միշտ պետք է մտապահել, թե որ համակարգի պարագայում բնակչի շահերն ավելի լավ ներկայացված կլինեն:

Վարչապետին կից ԸՕ բարեփոխման հանձնաժողովի անդամ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ Վահագն Հովակիմյանն էլ, մինչ օրակարգային հարցին անդրադառնալը, տեղեկացրեց, որ ԶՊ վարչության նիստում եկել են այն եզրահանգման, որ Ընտրական օրենսգրքի ՏԻՄ բաժնին վերաբերող մասում կտրուկ եւ սկզբունքային փոփոխություններին տալ քաղաքացիական նախաձեռնություններին, քանզի կան մարդիկ, որոնք ուզում են մասնակցել ընտրական գործընթացներին, բայց չեն ուզում դառնալ կուսակցական:

Որպես անձնական մոտեցում Վ. Հովակիմյանը նշեց. «Համամասնական ընտրակարգն այն ապագան է, որը բե-

րելու է զարգացման»:

Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ Դավիթ Գեւորգյանն էլ նկատեց, որ առաջիկա ընտրություններին ընտրակառուցված, կլանային շահերը, ծայրերը հավաքելը տեղ չեն ունենալու: «Մենք ունենալու ենք նոր իրավիճակ, նոր արդյունքներ: Այ-



սինքն, եթե մի մոդել նախկին քաղաքական պայմաններում չի գործել, չի նշանակում, որ այդ մոդելը վատն է կամ ամբողջովին վատն է: Իհարկե, թերություններ կան, փոփոխություններ պետք է լինեն, բայց մենք պետք է հասկանանք, թե եղած մոդելները նոր իրողության պայմաններում ինչպես են աշխատում, որ նոր գնանք փոփոխությունների», - ասաց Դ. Գեւորգյանը:

Կողմ արտահայտվելով համամասնական ընտրակարգի ներդրմանը՝ քննարկման մասնակիցներն առաջարկեցին բացառել դաշինքների մասնակցությունը եւ մասնակցելու հնարավորություն տալ քաղաքացիական նախաձեռնություններին, քանզի կան մարդիկ, որոնք ուզում են մասնակցել ընտրական գործընթացներին, բայց չեն ուզում դառնալ կուսակցական:

Ի լրումն հնչած բազմաթիվ կարծիքների, առաջարկների, մտահոգությունների՝ ՏԿԶ նա-

խարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը ներկաներին ասաց, որ փոփոխություններ կատարելու հարցում շտապողականության մասին խոսք լինել չի կարող, որովհետեւ, անկախ նրանից՝ այդ փոփոխությունները կարվեն, թե ոչ, հոկտեմբերի 21-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունները (Երեւան եւ այլ խոշոր համայնքներ) անցկացվելու են ինչ ընտրակարգով:

Ինչ վերաբերում է կուսակցությունների կայացվածությանը, ապա փոխնախարարն այն համոզմանն է, որ դրա համար պետք է համապատասխան դաշտ ստեղծել. «Աժ ընտրություններին կտրուկ բարձրանում է կուսակցությունների ձեւավորման, կուսակցական աշխատանքի մոտիվացիան: Հետո 5 տարի դա կանգնում է, որովհետեւ որեւէ ընտրություն կուսակցական հենքի վրա չի լինում»:

Համամասնական ընտրակարգը հնարավորություն է ճանապարհի եւ կուսակցությունների դերակատարման մեծաց-

ումն է, որ պետք է լայնախառն համայնքների ցանկը, որոնք ունենալու են ավագանու, ոչ թե ավագանու անդամի ընտրություններ, այնպիսի ընտրակարգ, որը կա Գյումրիի, Վանաձորի եւ Երեւանի դեպքում: Ենթադրում ենք, որ 10 000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում նման ընտրակարգ կսահմանվի: Բացի այդ, հանձնաժողովում բավականին կոնսենսուսային պատկերացում կա այն մասին, որ 40 000-70 000 բնակչություն ունեցող համայնքներում արժե ավելացնել ավագանու անդամների թիվը: Դ.Իոաննիսյանն արձագանքեց Վահագն Հովակիմյանի կողմից արված հայտարարությանը, որը վերաբերում էր ԶՊ կայացրած որոշմանը եւ նշեց, որ «Քաղաքացիական պայմանագրի» այդ որոշումն իմպերատիվ բնույթ չունի իրենց հանձնաժողովի համար, եւ ըստ էության հանձնաժողովն է որոշելու: «Իհարկե, գործադիրը, հետո խորհրդարանը դրան պետք է հավանություն տան, բայց, այդուհանդերձ, հանձնաժողովն է որոշելու, թե ինչը փոխել, ինչը չփոխել եւ ինչ անցումային դրույթներով փոխել»:

Ժողովրդի մանդատ ունեցող համայնքի ղեկավարն ավելի ազատ ու անկախ է

ՀՖՄ ղեկավար Վ. Մովսիսյանի եւ «Ապարեզ» լրագրողների ակումբի նախագահ Լ. Բարսեղյանի կողմից մշակված հաշորդ առաջարկը, որ դրվեց հանրային քննարկման, վերաբերում էր համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրությանը: Առաջարկի հիմքում այն գաղափարն էր, որ համամասնական ընտրակարգի դեպքում պարտադիր չէ, որ համայնքի ղեկավարը ընտրվի ավագանու կազմից. կարող են լինել ավագանու համամասնական եւ համայնքի ղեկավարի՝ ուղիղ ընտրություններ:

Առաջարկի հետ կապված Վ. Մովսիսյանը նշեց, որ համայնքի ղեկավարի ընտրության դեպքում նույնպես ցանկալի է քաղաքացիական նախաձեռնությունների մասնակցությունը. մարդը պետք է կարողանա իր համայնքում «տեղ» դառնալ, եթե ցանկություն ու ունակություն ունի:

Այս առաջարկը նույնպես բուն քննարկումների, կարծիքների բախման տեղիք տվեց: Կիզակետում ՏԻՄ կուսակցականացման հարցն էր:

Կար տեսակետ, որ համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունը տանում է համակարգի ապաքաղաքականացման, եւ պետք է կուսակցություններին կայացման հնարավորություն տալ:

← էջ 1

Մեր գրասենյակը հումանիտար ծրագրերից մեկն էլ իրականացրեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ: 2004-2010թթ. իրականացվեց «Արձագանք» ծրագիրը, որի նպատակն էր հզորացնել արտակարգ իրավիճակներին արձագանքող տեղական կառույցները՝ փրկարարների ուսուցման և համապատասխան սարքավորումների տրամադրման միջոցով: Բանն այն է, որ հրշեջները, որոնք իրականացնում էին նաև փրկարարական աշխատանքներ, այնքան էլ չէին համապատասխանում փրկարարին ներկայացվող պահանջներին, և վերոնշյալ ծրագրի ընթացքում վերապատրաստվեցին և վերազինվեցին մոտ 2400 հրշեջ-փրկարարներ: Որպես տրամաբանական շարունակություն եղավ այն, որ 2006 թվականից նրանց միացան տեղական բուժանձնակազմերը: 540 բժիշկ և բուժքույրեր եւ վերազինվեցին, ձեռք բերեցին հմտություններ՝ համագործակցելու փրկարարների հետ և ցուցաբերելու անհրաժեշտ օգնություն անմիջապես աղետի վայրում:

Հետագայում Հայաստանում ստեղծվեցին նաև 5 արհեստավարժ տարածքային փրկարարական ջոկատներ, որոնք ստացան նաև ներքին և միջազգային որակավորում՝ միանալով միջազգային փրկարարական ընտանիքին: Փրկարարներ ներկրող երկրից Հայաստանը վերածվեց փրկարարներ արտահանող երկրի:

Քանի որ Հայաստանը ընթանում է զարգացման ուղիով, Շվեյցարիայի կառավարությունը որոշեց 2016թ. վերջին դադարեցնել հումանիտար օժանդակությունը և ավելի շատ ուշադրություն դարձնել զարգացման ծրագրերին:

Չարգացման մեր ծրագիրն իրականացվում է գյուղատնտեսության ոլորտում. «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում 2014-2020թթ.» ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզում ստեղծվում է շուկայական շղթա, որպեսզի ֆերմերը կամ բնակիչը կարողանա իրացնել իր արտադրանքը: Գաղափարը բավական արդյունավետ եղավ, և այժմ ծրագիրն ընդլայնվել է՝ դրա մեջ ընդգրկելով նաև Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերը: Առետուրը խթանելու համար փորձում ենք համագործակցության եզրեր գտնել նաև հարեան Վրաստանի հետ:

ԵՅԶԳ-ն աջակցում է նաև ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների գործընթացին:

Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանն իրականացնում է վարչատարածքային բարեփոխումների գործընթացը, որով փորձ է արվում բարձրացնել կառավարման էֆեկտիվությունը, բարելավել քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակը:

2014թ. հունիսի 4-ին Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը ստորագրեցին «Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում» ծրագիրը, որի նպատակն է աջակցել Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի հաշվետվողականության, արդյունավետության և աշխատունակության բարձրացմանը:

Ծրագրով նախատեսվում է տրամադրել տեխնիկական աջակցություն՝ տեղական մարմինների կարողությունների զարգացման համար՝ նպատակ ունենալով ամրապնդել տեղական ինքնակառավարման համակարգը և խթանել լիազորությունների ապակենտրոնացումը:

Կարծում ենք, սա եզակի դեպք է, երբ մի քանի ոլորտ կազմակերպություն (ԵՅԶԳ, ԱՄՆ ՄԶԳ, Գերմանիայի կառավարություն) համատեղ աջակցում են ՀՀ կառավարությանը՝ որդեգրված տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներում:

Առաջնորդվելով ծրագրով՝ բարեփոխումների առաջին փուլում ձեռնարկված

ԲԱԶՄԱԲՆԱԿԱԿԱՎՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒՇԱՆՈՒՄ Է

18 բազմաբնակավայր համայնքներում ստեղծել ենք կառավարման տեսանկյունից ավելի ուժեղ համայնքներ՝ բարձրացնելով քաղաքացիներին տրամադրվող հանրային ծառայությունների որակը, թափանցիկությունը և արդյունավետությունը:

Այս համատեքստում կարելի էր Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) օժանդակությամբ հիմնված Զաղաքացիների սպասարկման գրասենյակները (ԶՍԳ), որոնք թույլ են տալիս «մեկ պատուհան» սկզբունքի համաձայն քաղաքացիներին մատուցել հասանելի և բարձրորակ ծառայություններ:

որոնք ստացել են օժանդակություն ԱՄԿ-ի կողմից, հաջողություններ գրանցեցին մասնակցային գործընթացներում, չնայած այն հանգամանքին, որ վարչատարածքային բարեփոխումներին զուգահեռ տեղական ինքնակառավարման ընտրություններում որպես համայնքի ղեկավար ընտրված կանանց թիվը նվազել է, ինչը պայմանավորված է դեռևս գործող կարծրատիպերով և ավելի մեծ մրցակցությամբ:

Կառավարության հետ փորձում ենք գտնել մեխանիզմներ, որպեսզի կանանց ընդգրկվածությունը տեղական մարմիններում ավելանա, և կանայք ակտիվորեն մասնակցեն քաղաքական գործընթացներին՝ ներդրելով իրենց գիտելիքներն ու կարողությունները:



Կարելի էր համարում համայնքապետարաններում և ԶՍԳ-ում Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ներդրումը, որը որպես ՏԻՄ-երի համար մշակված տեղեկատվական համակարգ, թույլ է տալիս ապահովել տեղեկատվական հոսքերի ավտոմատացված կառավարում համայնքներում: Համակարգը նպաստում է քաղաքացիների նկատմամբ ՏԻՄ-երի հաշվետվողականության և թափանցիկության աստիճանի բարձրացմանը, մատուցվող ծառայությունների վրա ծախսվող ժամանակի կրճատմանը: Համակարգի միջոցով հնարավոր է բնակիչներին մատուցել առցանց ծառայություններ, հետեւել դրանց ընթացքին: Ես կարծում եմ, որ այս համակարգի ներդրումը վերջակետ է դնում բնակիչների այն մտավախություններին, որ իրենց անհրաժեշտ ինֆորմացիան ստանալու համար ստիպված պետք է հասնեն կենտրոն: ՀԿՏՀ-ն ապահովում է վարչական ծառայությունների մատուցում բնակիչներին անմիջապես իրենց բնակավայրերում:

ԳՄՀԸ-ի հետ աջակցում ենք համայնքներին նաև համայնքի զարգացման, տարեկան աշխատանքային պլանների մշակման, ծրագրային բյուջետավարման հարցերում:

ՏԻ համակարգի կարելի էր հարցերից մեկն առկա մարդկային կարողությունների ամբողջական օգտագործումն է: Այս առումով կանանց մասնակցության դերի բարձրացումը չափազանց կարևոր է, և այս ուղղությամբ աշխատում ենք ԱՄԿ-ի զարգացման ծրագրի հետ: Ժամանակը ցույց տվեց, որ այն կանայք,

տեխնիկա՝ գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով:

Շատ կարելի է, որ մշակել են կառավարման մոդելներ և մեխանիզմներ՝ տրամադրված տեխնիկական միջոցների օգտագործման, սպասարկումն ապահովելու և ծառայությունները բնակիչներին հասանելի դարձնելու ուղղությամբ, ինչպես նաև լրացուցիչ գումարներ բերել համայնքային բյուջե՝ վարձակալության միջոցով, երբ սեզոնայնությամբ պայմանավորված, տեխնիկական միջոցների կարիքը համայնքում չկա:

ՏԻ համակարգում Ձեր գործունեության ընթացքում ինչպիսիք ինիցիատիվներ եք նկատել, որոնց լուծումը կնպաստի ոլորտի զարգացմանը:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգում զարգացման միտումները նկատելի են, բայց կան նաև հարցեր, որոնք շարունակում են բաց մնալ:

Լավ կլիներ, որ ավելի բարելավվի ՀՀ կառավարություն-համայնքներ հաղորդակցությունը, որպեսզի բարեփոխումների առավելությունները էլ ավելի հասանելի լինեն բնակիչներին, ինչպես նաև՝ բնակիչի ձայնը լսելի լինի կենտրոնում:

Ներկայումս ՀՀ-ում կան մի շարք բազմաբնակավայր համայնքներ, որոնցում արդեն որոշակի արդյունքներ կան, և պետք է դրանք ի ցույց դրվեն վերջերս խոշորացված կամ առաջիկայում խոշորացվող համայնքներին, որպեսզի մարդիկ տեսնեն վարչատարածքային բարեփոխումների դրական կողմերը:

Ավելին, վարչատարածքային բարեփոխումների գործընթացն ինքնանպատակ չէ, և համայնքների խոշորացմանը պետք է հաջորդեր լիազորությունների ապակենտրոնացումը, որը կառավարման առումով կնպաստի տեղական մարմինների էֆեկտիվ գործունեությանը, իսկ քաղաքական առումով՝ ժողովրդավարության բարձրացմանը, և որն արդեն իսկ ուշանում է:

Պետք է արդեն իսկ լինել ապակենտրոնացման գործողությունների աշխատանքային պլան՝ հստակ ժամանակացույցով, հստակ ֆինանսական հոսքերի աղբյուրների և շրջանառության պատկերացմամբ՝ հիմնված մշակված ճանապարհային քարտեզի վրա:

Եթե մինչև իշխանափոխությունը վարչատարածքային բարեփոխումները պլանավորվում էր ավարտել 2018-2019թթ., ապա այսօր ստեղծվել է անորոշ իրավիճակ, երբ կա տարակարծություն հետագա քայլերի հետ կապված:

Բնակիչները, համայնքները, նաև՝ դոկտոր կազմակերպությունները սպասում են ՀՀ կառավարության կողմից ուղարկված ազդակին:

Առաջիկա ի՞նչ ծրագրեր ունեք:

ԵՅԶԳ-ն կառավարում է իր որդեգրած քաղաքականությանը, և գալիք տարվանից ծրագիրը կիրականացնենք երրորդ փուլում խոշորացված համայնքներում ևս:

Ավելին, ԵՅԶԳ-ն կաջակցի տեղական ինքնակառավարման ոլորտում բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի սերտ համագործակցությանը՝ միասնական ուժերով օժանդակելու Հայաստանում հզոր տեղական ինքնակառավարման համակարգի կայացմանը:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԵԼԱՌԾԻ ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐՈՒՄ



Վարտվեց «Գեղարեգ» կրթամշակութային ՀԿ-ի կողմից իրականացված «TIMING- Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնակառավարման նոր գործելանոճ» ծրագիրը:

Ծրագրի ամփոփիչ միջոցառումը տեղի ունեցավ օգոստոսի 3-ին Գավառի երիտասարդական կենտրոնում, որին ներկա էին ինչպես ծրագրի թիրախային համայնքների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների ակտիվ քաղաքացիական խմբերի ներ-

կայացուցիչներ, համայնքների քննիչներ, այնպես էլ ներկայացուցիչներ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից և ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից:

Ծրագրի նպատակն էր բարձրացնել բնակչության ներգրավվածության մակարդակը համայնքային կառավարման գործընթացում, ձեռնարկել հաշվետու և մասնակցային ՏԻՄ, նպաստել քաղաքացիական խմբերի հզորացմանը: Ծրագիրը տեւեց շուրջ մեկ տա-

րի՝ Գավառ, Նորատուս, Սարուխան և Կարմիրգյուղ համայնքներում:

Ծրագրի ընթացքում իրականացվեցին հետևյալ հիմնական գործողությունները՝

1. 4 համայնքների ՏԻՄ-երի 15 ներկայացուցիչների 10 դասընթացների արդյունքում զարգացել են հաղորդակցման և կառավարման կարողություններ,

2. 15 ֆորում-թատրոնների օգնությամբ քաղաքացիները մասնակցել են տեսակետների փոխանակման և իրազեկման միջոցառումների, 5 բանավեճերի արդյունքում ձեռնարկվել է մասնակցային կառավարման



նոր մշակույթ,
3. 7 համայնքների ՏԻՄ-երը են ակտիվ խմբերը ծանոթացել են նախորդ ծրագրի հաջողված պատմություններին և փորձին,
4. լուսանկարների և նկարների ցուցահանդես-մրցույթի

օգնությամբ բարձրաձայնվել են համայնքային հիմնախնդիրները,

5. երիտասարդների մոտ զարգացել են սոցիալական և քաղաքական խնդիրներին լուծում տալու հմտություններ և խոսքի մշակույթը,

6. անցկացվել են ֆոկլոր-խմբային ցնարկումներ, վերհանվել են խնդիրներ և դրանք ներկայացվել են ՏԻՄ-երին,

7. հանրային ցնարկումների և լուսմների արդյունքում բնակիչները ծանոթացել են իրենց համայնքների 2017թ. բյուջեի կատարողականին և 2018թ. բյուջեի նախագծին,

8. ավագանու նիստերի վերաբերյալ իրազեկվել են համայնքների քննիչները, հեռուստադիտողները և ֆեյսբուքյան օգտատերերը,

9. բնակչությունը մասնակցում է մամուլի ասուլիսների, ընդգրկված է հանրային իրազեկման գործընթացներում,

10. վարչատարածքային փոփոխությունների վերաբերյալ անցկացվել է հանրային լուսմ, և բնակիչները հնարավորություն են ունեցել բարձրաձայնելու իրենց մտահոգությունները:

Սեփ. լր.

← էջ 3

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ Ե ՈՐՈՇԵԼՈՒ, ԹԵ ԻՆՉԸ ՓՈԽԵԼ, ԻՆՉԸ ՉՓՈԽԵԼ ԵՎ ԻՆՉ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՓՈԽԵԼ

Հնչած տեսակետներին դեմ էին քաղաքացիական կառավարման ներկայացուցիչները, որոնք պնդում էին, որ համամասնական ընտրակարգի անցնելու համար պետք է ունենալ գաղափարական հենքի վրա ձեռնարկված կուսակցություններ, որ համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունն ավելի բարձր է, և ժողովրդի մանդատ ունեցող համայնքի ղեկավարն ավելի ազատ ու անկախ է և ավելի մեծ պատասխանատվություն է կրում: Եվ եթե որդեգրել ենք տեղական ինքնակառավարման ճանապարհը, ապա պետք է հնարավորություն ստեղծել, որ տեղերում տեղական ինքնակառավարման փոխարեն կուսակցական կառավարում չիրականացվի, ինչպես եղել է տարիներ շարունակ: Ինչպես նաև չի կարելի ՏԻՄ-ը օգտագործել քաղաքական ինստիտուտի զարգացման համար:

Տարածքային կառավարման

են զարգացման փոխնախարար Դավիթ Գեւորգյանն էլ հարց բարձրացրեց. «Ի՞նչ է նշանակում ՏԻ մարմինները պետք չի քաղաքականացնել, բա ո՞վ պետք է կրի քաղաքական պատասխանատվություն Մեղրիի, Կաթնաջրի, Գյումրիի համար: Ես չեմ ասում արգելենք քաղաքացիական հասարակություններին մասնակցել, բայց երբ մենք ուզում ենք քաղաքացիական նախաձեռնություններին, դաշինքներին տեղ տալ մասնակցելու, ես ինչպես հասկանում եմ, դա ուզում ենք անել կուսակցությունները վերջնականապես թաղելու միջոցով»:

Ի պատասխան Դ. Գեւորգ-

յանի մտավախության՝ առաջարկի համահեղինակ Լ. Բարսեղյանը հակադարձեց, որ ուղիղ ընտրակարգի դեպքում պատահական ոչ մի անձ չի կարող առաջադրվել, այլ պետք է առաջադրվի ու պաշտպանվի քաղաքական կուսակցության կողմից, իսկ քաղաքացիական նախաձեռնությունների գաղափարը լավագույն տարբերակ է այս անցումային ժամանակաշրջանում, երբ չկան կայացած կուսակցություններ: Այս գաղափարը խթան կհանդիսանա կուսակցությունների առողջացման համար:

Ամփոփելով երկրորդ առաջարկի քննարկումը՝ ՀՀՄ ղեկավարը նշեց. «Եթե քաղաքա-

ցիական նախաձեռնությունների գաղափարը չանցնի, ես համայնքի ղեկավարը ընտրվի ավագանու կողմից, մենք Հայաստանում իսպառ կորցնում ենք տեղական ինքնակառավարումը»:

Քննարկման դրվեց նաև համամասնական ընտրակարգում բոնուսային համակարգի մասին առաջարկը: Հնչեցին կարծիքներ, որ հանրության քաղաքական տրամադրությունը համամասնորեն պետք է արտացոլվի տեղական ինքնակառավարման օրենսդիր մարմնում և չկա որեւէ բոնուսի անհրաժեշտություն:

Ըստ մեկ այլ տեսակետի՝ բոնուսային համակարգը դիտ-

վում է ավելի շատ որպես մանիպուլյացիոն գործիք, քան՝ խնդիրներ լուծելու հնարավորություն:

ՀՀ վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար Դանիել Իոաննիսյանն էլ այն համոզմունքը հայտնեց, որ բոնուսային համակարգը հակասում է համամասնական ընտրակարգի ծրագրին և կարող է հանգեցնել քաղաքացիական անկարգության, առաջարկները կարելի է նշանակություն ունեն ըՕ-ի ՏԻՄ հատվածը ձեռնարկելու համար:

ՀԱՍՄԻԿ ԵՐՈՐԲՅԱԼ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՅԱՆՈՒՆ ՄԱՔՈՒՐ ԻՋԵՎԱՆԻ

Հուլիսի 18-ին, Իջեանի քանդակների այգում Եվրասիա համագործակցությունը հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի (ԵՀՀՀՄ) կամավորները, Իջեանի համայնքապետարանի, Հուլիս կամուրջ ՅԿ-ի Իջեանի մասնաճյուղի, «Արեւիկ» սոցիալ-կրթական կենտրոնի եւ Գյուղական տուրիզմի զարգացման կենտրոնի հետ համատեղ իրականացրեցին շաբաթօրյակ:



Դեռևս ամիսներ առաջ, Իջեան ԻնֆոՏունը իր կամավորների հետ միասին նպատակ էր ձեռնարկել նպաստել Իջեան քաղաքի զբոսաշրջության զարգացմանը, որից անմիջականորեն բխում է նաև քաղաքի մաքրության ապահովումը: Ի թիվս այլանվիրված գործողությունների, որոնց նպատակն է քննարկումներ ծավալելու քաղաքում տուրիզմի զարգացման շուրջ եւ բացահայտելու քաղաքի տուրիստական ներուժը, Իջեան ԻնֆոՏան երիտասարդները նախաձեռնեցին նաև մի շարք ծրագրեր՝ ապահովելու քաղաքի մաքրությունը: ԻնֆոՏան կամավորներն ամիսներ առաջ նախաձեռնեցին բացահայտելու քաղաքի գլխավոր խորհրդանիշ հանդիսացող Աղստե գետի աղտոտման պատճառները: Առանձնացված պատճառներից թերեւս կարելի էր ենթադրել, որ քաղաքի մաքրության անտարբերու-

թյունը եւ ցածր տեղեկացվածությունը շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ: Ուստի եւ Իջեան ԻնֆոՏունը նախաձեռնեց քաղաքային շաբաթօրյակը, որը պատասխանի եւ երիտասարդների շրջանում կծեւավորի քաղաքը մաքուր եւ բարեկարգ պահելու գիտակցությունը՝ միաժամանակ կոչ անելով մյուս քաղաքացիներին եւս մաքուր պահել Իջեան քաղաքը: Այս շաբաթօրյակը «Երիտասարդները հանուն մաքուր Իջեանի» նախաձեռնության հեթական քայլերից էր:



Քաղաքի մաքրությունից գատ, ԻնֆոՏունը եւ նրա շուրջ հավաքված երիտասարդները ակտիվորեն զբաղվում են նաև քաղաքի տուրիստական վայրերի հանրայնացմամբ եւ այդ վայրերի մշակութային արժեքների նորոգման մատուցմամբ: Օրինակ, ԻնֆոՏան կամավորները մշակել են Իջեան քաղաքի քանդակների զբոսայգու մասին պատմող կողեր, եւ ին-

տերնետային կապի մշտական ապահովման պայմաններում զբոսաշրջիկները եւ բնակիչները կարող են ծանոթանալ քանդակների կերտման, ինչպես նաև այգու պատմությանը: Իսկ ԻնֆոՏան կամավորները պարբերաբար իրականացնում են ճանաչողական շրջայցեր քանդակների այգում՝ այսպիսով նպաստելով նաև այգու որպես հանրային եւ տուրիստական վայրի դերի բարձրացմանը:

Սեփ. լր.

ՅԱՎԱՔԱԳՐԵԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾԵԼ ԴՐԱՆՑԻՑ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐՆԵՐԸ

Հայաստանի 8 մարզերում գործող ԻնֆոՏաները, ակտիվորեն ներգրավված լինելով համայնքային կյանքի զարգացման գործում, իրենց գործունեությունը իրականացնում են նաև խոշորացված համայնքներում՝ ներգրավելով այդ համայնքների երիտասարդներին, տեղական իշխանություններին եւ այլն: Վերջիններիս գործունեությունը խոշորացված համայնքներում տարաբնույթ է՝ մեղիա շրջագայություններ, մշտադիտարկումներ, հարցումներ, իրազեկման աշխատանքներ, կարողությունների զարգացում եւ այլն:



Սյունիք ԻնֆոՏան շահառուները, որոնց թվում են նաև խոշորացված համայնքի բնակավայրերի երիտասարդները, ոչ միայն հավաքագրեցին կոնկրետ համայնքային խնդիրները, այլ նաև օգտագործելով մասնակցային գործիքները, փորձեցին լուծում տալ դրանց:

Դեռևս այս տարվա զարնանը Սյունիք ԻնֆոՏան աշակցությամբ Տաթև խոշորացված համայնքի երիտասարդները մի շարք հանդիպումներ եւ քննարկումներ կազմակերպեցին համայնքի տարբեր բնակավայրերում, հանդիպեցին բնակիչների հետ, փորձելով պարզել, թե նրանց կարծիքով որն է մասնավորապես Հալիձոր բնակավայրի առավել հրատապ

ընտրությունը. երիտասարդները որոշեցին հարցն ընդգրկել համայնքի վավաանու նիստի օրակարգում:

Ավելի վաղ նախաձեռնող խմբի անդամները մասնակցել էին Սյունիք ԻնֆոՏան կողմից կազմակերպված Համայնքի վավաանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնության վերաբերյալ դասընթացին: Այդ դասընթացի ընթացքում ստացված գիտելիքներն օգտագործեցին նախաձեռնության կազմակերպման ընթացքում եւ ստորագրահավաք կազմակերպեցին Տաթև համայնքում: Երիտասարդներն ամփոփեցին արդյունքները. առաջարկությունների եւ լուծումների փաթեթը ներկայաց-

վեց համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանին:

Օգոստոսի 21-ին Տաթև համայնքի Հալիձոր բնակավայրի վարչական նստավայրում տեղի ունեցած վավաանու արտագնա նիստում քննարկվեց եւ վավաանու կողմից միաձայն որոշում կայացվեց՝ համայնքի բյուջեից 1 մլն 200 հազար դրամ Հալիձոր բնակավայրի մշակույթի տան պատուհանների եւ դռների վերանորոգման համար տրամադրելու մասին:

Ամփոփելով այս նախաձեռնությունը՝ պետք է առանձնացնել մի քանի դիտարկում, որոնք կարելի էր տեղական ինքապետարանից հարցնել: Սյունիք ԻնֆոՏանը մասնակցելու գործիքներից մեկը: Նախաձեռնությունը ձեռնարկում է կառուցողական եւ համագործակցային մշակույթ համայնքի բնակիչների եւ իշխանությունների միջև, եւ ի վերջո համայնքային բյուջեից գումարը տրամադրվում է այն խնդրի լուծմանը, որի անհրաժեշտությունը տեսնում է բնակիչը:

Սեփ. լր.



ՄԱՐԴԱՄԵՋ ՍՈՑԻԱԼ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐ



Հունիսի վերջին օրերին Ավերանում էին հավաքվել Հայաստանի տարբեր մարզերի 70 երիտասարդներ: Նրանց բոլորին միավորել էր Մարդամեջ 2018 սոցիալ-նորարարության հավաքը, որի նպատակն է նորարար եւ մասնակցային լուծումների միջոցով նպաստել ՀՀ-ում տեղի ունեցող բարեփոխումների (սոցիալական, ապակենտրոնացման, թափանցիկության եւ հաշվետվողականության, մարդու իրավունքների) գործընթացների մասին տեղեկատվության, հանրային իրազեկման եւ մասնակցության բարձրացմանը:

Երիտասարդները հնարավորություն ունեցան չորս հազեցած օրերի ընթացքում դուրս բերել գաղափարներ, որոնք հետագայում վերածվեցին իրագործելի ծրագրերի: Միջոցառման ընթացքում մասնակիցները ձեռք բերեցին գիտելիքներ եւ հմտություններ իրենց կողմից առաջարկված ծրագրերն առավել արդյունավետ, նորարարական եւ իրագործելի դարձնելու համար: Մարդամեջի մեթոդաբանության հիմքում ընկած է նորարարության խթանումը եւ բարեկեցիկ համայնքներ ունենալու մղումը: Եվ հենց այս երկու շարժառիթներով ոգետրված՝ երիտասարդները մտահղացան ինը ծրագիր, որոնցից հինգն իրագործվելու հնարավորություն ստացան: Հավանության արժանացած ծրագրերը, որոնք միտված են լուծելու խնդիրներ տարբեր բնագավառներում՝ գյուղատնտեսությունից մինչև շրջակա միջավայր, կիրակա-նացվեն զուգահեռաբար մի քանի համայնքներում:

Ծրագրերից մեկը Ուստախցանն էր, որի նպատակն է, կենցաղային թափոններն արվես-

տում օգտագործելով, հանրության ուշադրությունը գրավել աղբի վերամշակման անհրաժեշտության վրա: Ծրագիրը կիրակա-նացվի միաժամանակ 6 համայնքներում:

Գյուղամեջ ծրագրի նախաձեռնող խումբը ստեղծելու է կատարել ինչ-որ մեկի երազանքը:

Խմբերից մեկը մշակել էր Խելացի աղբամանի ծրագիրը: Օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքները՝ նախագի հեղինակները ստեղծելու են աղբաման, որը հնարա-

վորություն կտա տեսակավորել աղբը եւ հանձնել այն վերամշակողներին: Համայնքի այն բնակիչներն, ովքեր կօգտվեն աղբամանից եւ կտեսակավորեն իրենց կենցաղային աղբը, կստանան ՏԻՄ բոնուսային ծրագրից օգտվելու հնարավորություն:

Կորած-մոլորված Հայաստան ծրագրի նպատակն է ուշադրություն բերել Հայաստանի լքված եւ լքվող բնակավայրերի ցավոտ հարցերի շուրջ: Ծրագրի մասնակիցներն ստեղծելու են օնլայն հարթակ, որտեղ ոչ միայն կտեղադրվեն այդ համայնքների պատմությունն ու տեսարժան վայրերը, այլ նաեւ կառաջարկվեն դրանց նոր լիցք հաղորդելու այլընտրանքային եւ ստեղծագործ մոտեցումները:

Սոցիալ նորարարության ճամբարն անցկացվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով իրականացվող «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» եւ «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրերի շրջանակում:

Էլեկտրոնային հարթակ, որը կնպաստի գյուղատնտեսական շուկայի ընդլայնմանն ու առաջխաղացմանը: Էլեկտրոնային հարթակը կազմակերպելու եւ հեշտացնելու է արտադրողի եւ վաճառողի միջեւ կապը:

Ծրագրերից մյուսը Երազանքների կատարման կյանքի կոչման startup լաբորատորիան է: Ծրագրի հեղինակներն առողջական լուրջ խնդիր ունեցող մարդկանց պատմությունների ներկայացման միջոցով ստեղծելու են երազանքների կատարման հարթակ, որի օգնությամբ ցանկացած մարդ կկարողանա



Էլեկտրոնային հարթակ, որը կնպաստի գյուղատնտեսական շուկայի ընդլայնմանն ու առաջխաղացմանը: Էլեկտրոնային հարթակը կազմակերպելու եւ հեշտացնելու է արտադրողի եւ վաճառողի միջեւ կապը:

Ծրագրերից մյուսը Երազանքների կատարման կյանքի կոչման startup լաբորատորիան է: Ծրագրի հեղինակներն առողջական լուրջ խնդիր ունեցող մարդկանց պատմությունների ներկայացման միջոցով ստեղծելու են երազանքների կատարման հարթակ, որի օգնությամբ ցանկացած մարդ կկարողանա



«Մարդամեջի կառավարման և զարգացման նախարարություն»



«Մարդամեջի կառավարման և զարգացման նախարարություն»

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանն օգոստոսի 8-ին ընդունել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիսերի գլ-

խավորած պատվիրակությանը, որի կազմում են եղել նաեւ հատուկ խորհրդատու Ջեֆ Փարետչանը, պետական կառավարման ոլորտի մասնագետ Բելլա Մարգարյանը եւ ապակենտրոնացման ոլորտի մասնագետ Արթուր Դրամփյա-

ԱՄՆ ՄԶԳ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նր: Ողջունելով պատվիրակության անդամներին՝ Սուրեն Պապիկյանը շնորհակալություն է հայտնել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությանը Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումներին օժանդակելու, տնտեսական եւ ենթակառուցվածքային մի շարք ծրագրեր նախաձեռնելու ու կյանքի կոչելու համար: Նա-

խարարը հավաստիացրել է, որ Հայաստանի կառավարությունը հաստատակամ է շարունակել ապակենտրոնացման բարեփոխումները եւ կգործադրի անհրաժեշտ բոլոր ջանքերը բարեփոխումների հետագա սահուն ընթացքն ապահովելու գործում:

ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիսերը, շնորհակալություն հայտնելով նախարարին

ընդունելության համար, բարձր է գնահատել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ու ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության միջեւ առկա համագործակցության մակարդակը եւ ընդգծել, որ գործակալությունը, հավատարիմ մնալով Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումներին աջակցելու իր հանձնառությանը, պատրաստակամ է սատարել այս բնագավառում ՀՀ կառավարության նախաձեռնություններին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ տեղական ինքնակառավարման կարողությունների ընդլայնմանը, վարչական լիազորությունների պատվիրակմանը, համայնքներում մասնակցային արդյունավետ ու հաշվետու կառավարմանը, ինչպես նաեւ ապակենտրոնացման ճանապարհային քարտեզի առանձին բաղադրիչներին վերաբերող հարցեր:



«Մարդամեջի կառավարման և զարգացման նախարարություն»

← էջ 1

Եկամուտները եւ համայնքների ֆինանսական անկախության ավելացումը

Գոյություն ունի ընդհանուր համաձայնություն, որ համայնքների սեփական եկամուտների ներկա աղբյուրները բավարար չեն: Ներկա համակարգը համայնքային մակարդակում հարկային անկախության համար գործնականում տեղ չի տալիս: Հարկային համակարգը խոչընդոտում է համայնքների հարկային ջանքերը եւ գրկում նրանց ֆինանսական անկախությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների խթանման եւ կենտրոնական կառավարության կողմից հատկացվող դոտացիաներից կախվածությունը նվազեցնելու (ինչպես նաեւ հնարավոր նոր պարտականությունների կատարումը ֆինանսավորելու) համար անհրաժեշտ է ավելացնել համայնքների ֆինանսավորման մեջ սեփական հարկերի կշիռը: Դա պետք է արվի առանց ընդհանուր հարկային բեռի ավելացման, այսինքն տեղական հարկային բարեփոխումը պետք է ապահովի եկամտային չեզոք ազդեցությունը ընդհանուր կառավարության մակարդակով: Հետեւաբար, տեղական հարկերի ավելացումը պետք է զուգորդվի կենտրոնական հարկերի նվազմամբ: Դա համահունչ է նոր կառավարության քաղաքական օրակարգին, որը բացառում է նոր հարկերի կիրառման հնարավորությունը՝ առանց գոյություն ունեցող հարկերի կրճատման:

Ավելին, նոր հարկերը պետք է ներդրվեն համահարթեցման առումով եկամտի չեզոքության սկզբունքին համապատասխան: Հետեւաբար, բոլոր դեպքերում կենտրոնական կառավարության կողմից պետք է ամրագրվի հարկային դրույքաչափերի ստանդարտ շեմ, ընդ որում՝ համայնքները պետք է հնարավորություն ունենան փոխելու հարկի դրույքաչափը ստանդարտ շեմի սահմաններում: Ֆինանսական հնարավորությունները պետք է հաշվարկվեն ոչ թե փաստացի, այլ կառավարության կողմից սահմանված ստանդարտ հարկային դրույքաչափի հիման վրա: Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ջանքերի փոշիացումից խուսափելու համար սահմանված շեմը գերազանցող բոլոր հավելյալ եկամուտները հաշվի չեն առնվելու համահարթեցման բանաձեւում եւ լիովին հասանելի կլինեն տեղական ծառայությունների ֆինանսավորման համար: Համապատասխանաբար, եթե համայնքը որոշի սեփական հարկային դրույքը սահմանել կառավարության կողմից սահմանված դրույքաչափից ավելի ցածր մակարդակով, այն չի փոխհատուցվի համահարթեցման գործընթացի ներքո: Համահարթեցման այս մոտեցումը համահունչ է համայնքների ֆինանսական պատասխանատվության սկզբունքին:

Տեղական եկամտահարկ

Տեղական եկամտահարկը(ԵՀ) կարող է ներդրվել երկու հնարավոր ձևերով՝ եկամտի համատեղ հարկում կամ համայնքի տեղական հարկի սահմանում: Տեղական ինքնակառավարման մարմինները սեփական հարկային դրույքաչափ կարող են սահմանել միայն երկրորդ տարբերակի դեպքում, հետեւաբար տեղական ֆինանսական

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԹԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ուսումնասիրման ենթակա կարելու հարցերը՝ հետագա վերլուծության հիմք

սական իրավասության եւ ֆինանսական անկախության խթանման առումով այն նախընտրելի է: Սովորաբար տեղական հարկը սահմանվում է որպես կենտրոնական կառավարության կողմից սահմանված պետական ԵՀ-ի գծով հարկային եկամտի (հարկային բազայի) նկատմամբ ֆիքսված (ցածր) փոխարժեքով գանձվող լրացուցիչ հարկ: Օրենքը կարող է սահմանել ստանդարտ դրույքաչափը եւ շեմը, որի շրջանակներում յուրաքանչյուր համայնք կորոշի իր սեփական դրույքաչափը: Նման դեպքում ընդհանուր հարկային բեռը անփոփոխ թողնելու համար պետական ԵՀ-ի դրույքաչափերը պետք է իջեցվեն: Օրինակ, եթե տեղական ԵՀ-ի ստանդարտ դրույքաչափը սահմանվում է 1% (կամ 5%), ապա պետական ԵՀ-ի դրույքաչափը կրճատվում է 1 (կամ 5) տոկոսային կետով:

Հարկը գանձվում է համայնքում գրանցված հարկատուներից՝ նրանց աշխատավայրից անկախ:

Ստանդարտ հարկի դրույքաչափերը պետք է սահմանվեն հաշվի առնելով Երեւան քաղաքի հատուկ կարգավիճակը: Դա նշանակում է, որ ստանդարտ դրույքաչափը չպետք է գերազանցի այն մակարդակը, որի պարագայում Երեւան քաղաքը ֆինանսական հավասարակշռության մեջ է հայտնվում իր ծախսային կարիքների առումով: Հակառակ դեպքում, եթե Երեւանը ունենա իր կարիքները գերազանցող միջոցներ, ավելցուկի վերադարձի խնդիր կարող է շատ դժվար կառավարելի լինել: Պետք է խուսափել ֆինանսական համահարթեցման համակարգը հորիզոնական դարձնելու վտանգից:

Անշարժ գույքի հարկը

Տեղական հողի եւ գույքի հարկերը, ինչպես արդեն նախատեսված է, կարող են միավորվել որպես անշարժ գույքի միասնական հարկ: Ինչպես եւ տեղական ԵՀ-ի դեպքում, համայնքներին կարող է տրվել հայեցողության իրավունք՝ պետական օրենքը կախմանի ստանդարտ դրույքաչափը եւ շեմը, որոնց սահմաններում տեղական իշխանությունները կարող են սահմանել իրենց դրույքաչափերը: Իրականում, վերջին օրենքի համաձայն, հողի հարկը եւ գույքահարկը պետք է փոխարինվեն նոր անշարժ գույքի հարկով, որի դեպքում հարկային դրույքաչափերը սահմանելիս համայնքներին կտրվի 10% ճկունություն: Սակայն, տեխնիկական խնդիրների պատճառով, նոր հարկի ներդրումը հետաձգվել է երկու տարով:

Ծառայությունների հարկ եւ հյուրանոցային հարկ

Համայնքների հարկային անկախությունը կարող է խթանվել, տեղական ԵՀ-ի եւ անշարժ գույքի հարկից բացի, այլ հարկերի սահմանման հնարավորությամբ կամավոր հիմունքով: Որպես օրինակ, անշարժ գույքի հարկը կարող է համալրվել վարձակալների համար սահմանված ծառայությունների հարկով, որը կհաշվարկվի նույն հարկային բազայի նկատմամբ (կադաստրային արժեքի): Այդ հարկը կարող է սահմանվել նաեւ համայնքների կողմից մատուցվող ծառայությունների (որոշ կատեգորիաների) դիմաց վարձակալներից գանձվող վճարով: Վերջինս պետք է ուղեկցվի անշարժ գույքի հարկի կրճատմամբ: Ծառայությունների հարկը պետք է ներդրվի կամավորությամբ (որոնք հաշվարկվում են հարկային բազայի ու դրույքաչափի հարկերի ամրագրման հարցում օգտվեն անկախության բարձր աստիճանից):

Համահարթեցման համակարգը Զամահարթեցման դերը մանրամասն քննարկվել է: Համաձայնեցվեց, որ հարկավոր է համահարթեցնել ոչ միայն համայնքների հարկային կարողությունները, այլ նաեւ ծախսային կարիքները: Համակարգը պետք է հավասարակշռի ֆինանսական բացը, այսինքն՝ ստանդարտ հարկային կարողությունների (որոնք հաշվարկվում են հարկային բազայի նկատմամբ կիրառվող ստանդարտ դրույքաչափի միջոցով) եւ ստանդարտ ծախսային կարիքների միջեւ տարբերությունը: Որոշվեց, որ գործող համակարգը թույլ է տալիս հավասարակշռել ֆինանսական բացը:

Սակայն գոյություն ունեն խնդիրներ, որոնք պահանջում են ներկայիս համահարթեցման համակարգի հետագա բարելավում:

Համահարթեցման համակարգը

Վերջերս ընդունված ֆինանսական համահարթեցման մասին օրենքը արդեն իսկ նախատեսում է որոշ փոփոխություններ, որոնք միտված են այն անհամապատասխանությունների նվազեցմանը, որոնք առաջանում են երկու նվազագույն կարիքային գործոնների՝ յուրաքանչյուր համայնքում բնակավայրերի քանակի եւ բարձրության գործակցի պատճառով: Համայնքների միավորման խրախուսմանը միտված առաջին գործոնի կշիռը չպիտի ավելի մեծ է, իսկ երկրորդ գործոնը գրեթե անտեսում է այն հանգամանքը, որ միեւնոյն համայնքում կարող են լինել տարբեր բարձրությունների վրա գտնվող բնակավայրեր: Նաեւ ճանաչվել է բանաձեւում այն նոր գործառնությունները ներառելու կարեւորությունը, որոնք կվերաբերեն ապակենտրոնացման գործընթացում ներգրավված համայնքներին: Այդ ամենից ելնելով ստանդարտ ծախսային կարիքների գնահատումը պետք է ավելի արդյունավետ ձևով կատարվի:

Հոտացիաների վերաբաշխումը նոր ֆինանսական համահարթեցման օրենքի համաձայն կիրառվում է միայն նոր առաջացող միջոցների նկատմամբ, քանի որ նոր համակարգի ներքո տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող ավելի քիչ տրանսֆերտներ ստանալ, քան նախկինում: Այս փոփոխությունը առաջարկվել է Երեւան քաղաքի ընդհանուր ֆինանսական միջոցների կրճատում թույլ

չտալուն միտված ճնշման տակ: Այս կանոնը զգալիորեն սահմանափակում է նոր համակարգի ներդրման արդյունավետությունը, քանի որ համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը ներկայումս սահմանված է պետական բյուջեի 4%-ի չափով: Երեւանի ներկայությունը համահարթեցման համակարգում անհավասարակշռություն է ստեղծում միջկառավարական դոտացիաների վերաբաշխման գործընթացում, քանի որ ներկա պայմաններում Երեւանը կլանում է իր ծախսային կարիքները եւսպես գերազանցող միջոցներ:

● Մեկ այլ կարելու խնդիր է շարունակվող ապակենտրոնացման գործընթացում համայնքներին տրվելիք իրավասությունների շրջանակը, որը, ընթացիկ եկամուտների աղբյուրների եւ համահարթեցման դոտացիաների կողմից համայնքների ծախսաձեւում ապահովելու անհնարիության պարագայում առաջացնում է համայնքի ծախսային կարիքների թերազնահատման եւ ուղղահայաց ֆինանսական անհավասարակշռության ընդլայնման վտանգ:

Ծախսային կարիքները

Ֆինանսական համահարթեցման մասին ՀՀ օրենքը սահմանում է ծախսային կարիքները՝ հաշվի առնելով չորս գործոնները եւ դրանց վրա հիմնված կշիռները, որոնք որոշվում են ելնելով կոնկրետ նկատառումներից: Այդ նկատառումների թափանցիկությունը խիստ սահմանափակ է: Թեեւ կշիռները սահմանվել են վիճակագրական տվյալների մանրակրկիտ վերլուծության հիման վրա, վիճակագրական մեթոդների եւ դրանց արդյունքների մասին տեղեկությունները չեն հրապարակվել: Ուստի թափանցիկության ավելի բարձր աստիճանը չափազանց ողջունելի է:


Հաշվի առնելով նաեւ իտալական փորձը, կարելի է առաջարկել կշիռների որոշման ներկա համակարգի բարելավում հետեւյալ միջոցով.

● համայնքներում ծախսային կարիքների տարբերությունների վրա ազդող իրավասությունների եւ փոփոխականների առավել ճշգրիտ սահմանում,

● ռեգրեսիվ ծախսերի մոտեցման հիման վրա թափանցիկ վիճակագրական մեթոդների կիրառում՝ կշիռները կախման վրա ռեգրեսիվ մոտեցման միջոցով գնահատման արդյունքում՝ ծախսային գործառնության վրա հիմնված մոդելի շրջանակում:

Այս մոտեցման շնորհիվ համակարգը ավելի հստակ կարտացույց երկրի տարբեր շրջաններում եւ տարբեր կատեգորիաների համայնքներում ծառայությունների մատուցման գծով իրական ծախսը: Ավելին, նման վիճակագրական մոտեցումը թույլ կտա թերի ծավալարդյունքը գնահատել ավելի ճշգրիտ, քան ուղղակի հաշվի առնելով 3500 բնակչից քիչ ունեցող համայնքների համար օրենքով սահմանված դոտացիաների գումարը:

Եվրոպայի հորիզոնական հարթության խումբ



«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթ
Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Համայնքների
ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրասենյակի վկայական՝
թիվ 03U063471,
տրված՝ 06. 02. 2004 թ.

Թերթը իրատարակվում է Ամերիկայի
ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության
օժանդակությամբ իրականացվող «Հանրային
մասնակցություն տեղական
ինքնակառավարմանը» (Համայնք) ծրագրի
շրջանակներում: Այստեղ արտահայտված
տեսակետները միմյանց հեղինակներին են եւ
պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ
կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՐԵԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ
ՎԱՅՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՅՐԱՄ ԵՎՅԱԿՅԱՆ
ԱԲՐԱՎԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՒՐՆ ԼԵՎՍՍԱՆՈՐՅԱՆ
ՀՈՒՓՍԻՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴՎԱԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԵՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՆՎԱՆ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝
Խմբագիր
ԱՐԵՎԱՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Բուշաքի 20,
4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ. փոստ՝ info@cfoamail.am
Կայք՝ http://cfoa.am/
Տպագրված է «Տիգրան Մեծ»
իրատարակչության տպարանում,
ք.Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: